

սուն հազարաւ ելաներ Վասակ զաւրավարն ընդդէմ Նոցա. հարկաներ սատակեր զգաւրս Նոցա, սպանաներ զՎահրիճն, եւ կոտորեր զգաւրսն Պարսից, եւ ոչ թողոյր ի Նոցանէ եւ ոչ մի. եւ զգուշանայր զսահմանաւք երկրին իւրոյ:

ԳՆՈՒԽ ԼԱ.

1 Յաղագս Գումանդ Շապիոյ, որ մեծաւ պարծանաւք պարծեալ առաջի արքային Պարսից Շապիոյ, եւ առեալ ածեր ի վերայ աշխարհին Յայոց իննհարեւր հազար զաւրս. եւ կամ զհա՛րոյ Նկուն լինէին, չարաչար մերժեալ լինէին յաշխարհէն Յայոց:

2 Եւ եղև յետ այտորիկ գայր հասաներ Գումանդ Շապուհ, առաքեալ ի Շապուհոյ արքայէ Պարսից իննհարիւր հազարաւ, պարծեցեալ առաջի թագաւորին: 3 Եւ գնացեալ, գայր հասաներ յաշխարհն Յայոց. եւ առաջնորդ ունէր ի ձեռն¹ զՄերուժանն վատանշան, որ էր յԱրծրունեաց տոհմէն յերկրէն Յայոց: 4 Ապա գայր հասաներ, եւ զեղծ գտաներ զսահմանապահսն՝ որք պահէին զսահմանս Յայոց: 5 Ապա լցան սփռեցան ծաւալեցան ընդ ամենայն երկիրն Յայոց, աւար առնուլ քանդել աւերել զերկիրն ամենայն Յայոց աշխարհին: 6 Ապա կազմեր պատրաստեր Վասակ զաւրավարն Յայոց, հասաներ անկաներ ի վերայ արքայազնոյն. եւ Նախ զԳումանդ Շապուհն սպանաներ: 7 Եւ ապա ընդ ցիրն ասպատակ սփռեալ հայացիքն, զամենայն զաւրսն Պարսից կոտորեալ, անմի արարեալ սպառեցին: 8 Բայց միայն չարագործն Մերուժանն միաձի ճողոպրեալ, փախչեր անկաներ յերկիրն Պարսից:

ԳՆՈՒԽ ԼԲ.

1 Յաղագս Դեհկան Նահապետի, որ առաքեցաւ ի Շապիոյ արքայէ Պարսից ի վերայ Արշակայ Յայոց արքային՝ զաւրաւք բազմաւք. ապա հասաներ սատակեր զնոսա զաւրավարն Յայոց Վասակ:

2 Յետ այսր ամենայնի Շապուհ արքային Պարսից զաւրաժողով լինէր, եւ կուտեր զաւրս անչափս եւ անթիւ եւ անհամար իբրեւ զաւազ² ծովու, եւ կուռ վառեալ՝ որք Նիզակ ի ձեռն առնուին, չորեքհարիւր բեր զաւրս բազումս: 3 Եւ զԴեհկան Նահապետ, որ տոհմիկ իսկ էր ազգաւ տոհմին զաւրավարացն Յայոց, այս ինքն Մամիկոնենից, առաքեր զնա թագաւորն Պարսից Շապուհ յերկիրն Յայոց ի վերայ Արշակայ արքային Յայոց:

4 Գայր հասաներ ի սահմանս երկրին Յայոց. ապա եւ զհայացիսն ոչ ինչ ծուլացեալ ի քուն գտաներ, այլ կազմ պատրաստք կային Նմին գործոյ ճակա-

1 Ի միում օրինակի՝ առաջնորդէր Մերուժան

2 Յօրինակ մի յաւելու՝ առ եզեր